ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/63

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Է. Չատինյանի (լիազորագիր, տրված՝ 20.08.2019թ.)

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝

Գ. Մուրադյանի (լիազորագիր, տրված՝ 28.08.2019թ.)

քննելով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/18» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի կողմից 23.08.2019թ. ներկայացված (26.08.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/63 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Հարությունյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Հարությունյան Շին» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 23.08.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/18» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ են ներկայացրել «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ն և «Այ Պլաստ» ՍՊԸ-ն /գործակալության պայմանագիր/, ինչպես նաև «Հարությունյան Շին» ՍՊ և «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյան ընկերությունների կոնսորցիումը:

2. 2019 թվականի օգոստոսի 14-ին գնահատող հանձնաժողովի կողմից կայացվել է թիվ 2 արձանագրությունը, որի 3.2-րդ կետում նշվել է՝ մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանատվություններ հրավերի պահանջների նկատմամբ, այն է՝ հայտի ապահովումները /բանկային երաշխիքները/ ներկայացված են հրավերի 7.4-րդ կետով սահմանված պահանջներին անհամապատասխան /մասնակիցների կողմից չի ապահովվել հայտերի ապահովման 90/իննսուն/ աշխատանքային օրվա վավերության պայմանը/:

3. Նույն արձանագրության 3.2-րդ կետի 2-րդ պարբերությամբ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ին N526-Ն որոշմամբ 40-րդ կետի 4-րդ ենթակետով, որոշել է մերժել մասնակիցների /այդ թվում նաև բողոքաբերի/ հայտերը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը որոշել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին.

2019 թվականի օգոստոսի 14-ին գնահատող հանձնաժողովի կողմից կայացվել է թիվ 2 արձանագրությունը, որի 3.2-րդ կետով սահմանվել է, որ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտը չի հապատասխանում Հրավերի 7.4-րդ կետով սահմանված պահանջներին:

Համաձայն Հրավերի 7.4-րդ կետի՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

2017թ. սեպտեմբերի 12-ին ՀՀ Սահմանադրական դատարանը կայացրել է թիվ ՍԴՈ-1376 որոշումը, որով մեկնաբանել է իրավաբանության մեջ կիրառվող «օր» և «օրացուցային օր» եզրույթները՝ հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերին:

Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նախևառաջ արձանագրել, որ դիմողն իր իրավունքների ենթադրյալ խախտումն ըստ էության պայմանավորում է վիճարկվող դրույթներում իրավական անորոշության և օրենսդրական բացի առկայությամբ: Մասնավորապես, դիմողը վկայակոչում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համանման կանոնակարգումները, որտեղ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, տարանջատված են «օր» և «օրացուցային օր» եզրույթները, և որտեղ նախատեսված է, որ օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը, իսկ օրացուցային օրերով հաշվարկվող ժամկետներում ներառվում են հանգստյան և օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը: …

Այսինքն, ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված որոշման համակարգային վերլուծությունից հետևում է, որ գոյություն ունի 3 տեսակի սահմանում՝

1. Աշխատանքային օր,
2. Ոչ աշխատանքային օր
3. Հանգստյան օր

Աշխատանքային օր՝ ոչ հանգստի՝ աշխատելու օր: /Հիմք՝ Նայիրի հայերենի բացատրական բառարան/:

Այսինքն, ստացվում է, որ աշխատանքային օրերի մեջ չեն ներառվում հանգստյան և օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի՝ ընդհանուր հանգստյան օրը կիրակին է, իսկ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ շաբաթը

և կիրակին, բացառությամբ սույն հոդվածի 2-4-րդ մասերով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերի:

Տվյալ դեպքում, քանի որ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն և «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյան աշխատում են 6-օրյա աշխատանքային ռեժիմով, իսկ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք էջից, ինչպես նաև 011-514-000, 1-05 հեռախոսահամարին կատարված հեռախոսազանգից հետևում է, որ Երևանի քաղաքապետարանի աշխատանքային ժամերն է ամեն օր ժամը 09:00-ից 18:00-ն, ուստի նշվածից հետևում է ընդհանուր կանոնի համաձայն հանգստյան օրը՝ միայն կիրակին է՝ հաշվի առնելով նաև այն հանագամանքը, որ սույն դեպքում կիրառելի չէ ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-4-րդ մասերով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերը:

Բացի այդ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ եթե հանգստյան օրերի մեջ ներառվեր նաև շաբաթ օրը, ապա գնահատող հանձնաժողովը հրավերի տեքստը հաստատելիս այդ մասին կնշեր, և քանի որ առկա չէ նման նշում, ուստի պնդումը մեկն է, որ առանց բացառության ընդհանուր հանգստյան օրը կիրակին է:

Ինչ վերաբերում է ոչ աշխատանքային օրերին, ապա այս հարցի կարգավորումը տրված է «Հայաստանի հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքով, որտեղ ներկայացված են բոլոր տոնական և հիշատակի օրերը:

Հասկանալու համար արդյոք բողոքաբերի կողմից ներկայացված հայտի ապահովումը վավեր է հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր, թե ոչ անհրաժեշտ է փաստերը շարադրել վերը նշված իրավական վերլուծության լույսի ներքո և կատարել ճշգրիտ, պարզ մաթեմատիկական հաշվարկ:

Այսպես՝ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյան կազմերպության կոնսորցիումի կողմից թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/18» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցության հայտ ներկայացվել է 2019թ. օգոստոսի 13-ին:

Հայտին կից, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացված է եղել թիվ ՀԲԵՆ19/123-01 բանկային երաշխիքը, որի գործողության ժամկետը սահմանված է եղել մինչև 2019թ. դեկտեմբերի 10-ը:

Նման պայմաններում անհրաժեշտ է պարզել, թե հայտը ներկայացվելու օրվանից՝ այսինքն 13.08.2019թ. մինչև 10.12.2019թ. ներառյալ, որքան աշխատանքային օր է, այլ կերպ ասած հայտի ապահովումը վավեր է 90 (իննսուն) աշխատանքային օր, թե ոչ:

13.08.2019-10.12.2019թթ. ընդհանուր առմամբ 119 օրացուցային օր է, որից 17 օրը հանգստան օր է՝ կիրակի, իսկ 1 օրը՝ ոչ աշխատանքային օր /Հիմք՝ «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված, համաձայն որի՝ Անկախության տոն՝ նշվում է սեպտեմբերի 21-ին, ոչ աշխատանքային օր/:

Քանի որ ինչպես արդեն նշվել է աշխատանքային օրերի մեջ ներառված չեն հանգստյան և օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը, ուստի նշվածից հետևում է, որ 13.08.2019-10.12.2019թթ. ներառյալ աշխատանքային օրերը 100-ն է/118-17-1/:

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյան ընկերության կոնսորցիումի կողմից ներկայացված ՀԲԵՆ19/123-01 բանկային երաշխիքը վավեր է եղել 90 և ավելի օր, հետևաբար հայտը համապատասխանել է հրավերի 7.4-րդ կետով սահմանված պահանջներին, ինչից էլ հետևում է, որ բացակայել է հայտը մերժելու հիմքերը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Տվյալ դեպքում, քանի որ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյան կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը՝ այդ թվում նաև հայտի ապահովումը, ամբողջությամբ համապատասխանել է հրավերի պահանջներին, ուստի այն պետք է գնահատվեր բավարար: Այնինչ, ի հակառակն նշվածի, գնահատող հանձնաժողովը 2019թ. օգոստոսի 14-ին կազմել է թիվ 2 արձանագրությունը, որի 3.2-րդ կետով որոշել է բողոքաբերի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Դեռևս 2019թ. օգոստոսի 8-ին /այսինքն, նախքան հայտի ներկայացումը/ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի կողմից ծանուցում է ուղարկվել «Հարությունյան Շին» ՍՊԸ-ին, որով Բանկը տեղեկացրել է, որ ՀԲԵՊ19/60-01 բանկային երաշխիքի պայմանագրով թողարկված 9.000.000 ՀՀ դրամի չափով բանկային երաշխիքի ժամկետը երկարաձգվել է մինչև 2019թ. դեկտեմբերի 17-ը:

Այսինքն, ևս մեկ հանգամանք, որ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը վավեր է եղել 90 /իննսուն/ աշխատանքային օրից ավելի: Նշված փաստերը գնահատող հանձնաժողովին ներկայացնելու անհրաժեշտություն ի սպառ բացակայել է, քանի որ մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովումը միևնույն է

արդեն իսկ վավեր է եղել 100 աշխատանքային օր: Այսպիսով առկա չէ և չի էլ եղել հրավերի պահանջների խախտում, այլ կերպ ասած մասնակիցը կրել է բացասական հետևանքներ առանց որևէ նորմի պահանջի խախտման: Ավելին, չանտեսենք նաև այն հանգամանքը, որ բանկային երաշխիքի ժամկետի երկարացման վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու պարտականություն մասնակիցը չի ունեցել այդ իսկ պատճառով չի ներկայացրել, իսկ ինչպես հայտնի է ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով /Հիմք՝ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդված/:

Ավելին, եթե մասնակցի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատեր և մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվեր, ապա այսօր արդեն պայմանագրի կնքման փուլում մասնակիցը հայտի ապահովման փոխարեն կներկայացներ պայմանագրի ապահովում՝ որպես ընտրված մասնակցի կողմից պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց:

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ մասնակցի կողմից ներկայացված հայտը ցանկացած պարագայում համապատասխանել է հրավերի պահանջներին և ենթակա էր բավարարման:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.08.2019թ. թիվ 2 արձանագրության 3.2. կետով կայացրած որոշումը.

2. Պարտավորեցնել պատվիրատուին ընդունել «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյան ընկերության կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու և վերջինիս առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշում:

Ի լրումն բողոքի 09.09.2019թ. ներկայացված գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ անհատական իրավական ակտը՝ նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտն է, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման նպատակով Հայաստանի

Հանրապետության կառավարությունը հաստատում է հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի հիմնական պայմաններ եզրույթը և հրավերի օրինակելի ձևն անհատական իրավական ակտ է, քանի որ հանդիսանում է ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 244-Ա հրամանի հավելված և որի պայմանները չպետք է հակասեն տվյալ իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտին: Տվյալ դեպքում Ընկերությունը ևս մեկ անգամ ընդգծում է, որ հիմնական պայման եզրույթը համապատասխանում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի «Ընդհանուր հանգստյան օրը կիրակին է» եզրույթին: Այսինքն՝ գործադիրն իր օրինակելի ձևի մեջ ընդհանուր պայման է նշում, իսկ հատուկ պայմանների դեպքում փոփոխությունը պետք է կատարի պատվիրատուն, որն ըստ էության թողել է անփոփոխ, որով և հաստատել է իր կողմից ներկայացվող հրավերի պահանջը (ընդհանուր պայման՝ ոչ աշխատանքային օր է համարվում միայն կիրակի օրը):

Մասնակիցները չէին կարող և պարտավոր չէին գուշակել պատվիրատուի ցանկությունները, վերջիններս, առաջնորդվելով գործող օրենսդրությամբ, հստակ գիտակցել են, որ ընդհանուր կանոնի համաձայն հանգստյան օրը կիրակին է, հետևաբար եթե պատվիրատուն ցանկանում էր որպես հանգստյան օր դիտարկել նաև շաբաթ օրը, ապա պարտավոր էր այդ մասին նշել հրավերում:

Ամփոփելով վերոգրյալը և հուսալով, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, ով շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցությունից Ընկերությունը կրկին պնդել է բողոքով ներկայացված պահանջը:

«Հարությունյան Շին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.08.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.08.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով առարկել է բողոքի դեմ՝ հայտնելով, որ Ընկերության կողմից ներկայացված բանկային երաշխիքի վավերականության ժամկետը պակաս է 90 աշխատանքային օրից, ուստի մերժելով Կոնսորցիումի հայտը, գնահատող հանձնաժողովը գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/63 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/63 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/18» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով 13.08.2019թ. հայտ է ներկայացրել «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյան ընկերության կոնսորցիումը (հետայսու նաև՝ Կոնսորցիում):

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Կոնսորցիումի հայտը մերժվել է այն հիմքով, որ Կոնսորցիումի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի կողմից 23.08.2019թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/18» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է

հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, մասնակիցը հայտով ներկայացնում է, որ հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ, եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած, ապա սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում է դրա բնօրինակը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/18» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 3-րդ պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակից կամ բանկային

երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե բանկային երաշխքի ձևով հայտի ապահովում ներկայացրած մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում է հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը՝ իր կողմից հաստատված ուղեկցող գրությամբ:

Հրավերի նույն մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

Հրավերի նույն մասի 7-րդ կետի 7.4 ենթակետի համաձայն՝ **հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:** Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 13.08.2019թ. հայտ է ներկայացրել «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյան ընկերության կոնսորցիումը:

Կոնսորցիումը որպես հայտի ապահովում ներկայացրել է «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 08.08.2019թ. տրված թիվ ՀԲԵՆ19/123-01 բանկային երաշխիքը, որի համաձայն բանկային երաշխիքն ուժի մեջ է մտնում տալու պահից և գործում է մինչև 10.12.2019թ. ներառյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Կոնսորցիումի հայտը մերժվել է այն հիմքով, որ Կոնսորցիումի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես չի բավարարում 90 աշխատանքային օրվա ընթացքում վավեր լինելու պահանջը:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր, մինչդեռ Կոնսորցիումի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված բանկային

երաշխիքի վավերականության ժամկետը սահմանվել է 86 աշխատանքային օր: Մասնավորապես Ընկերությունը հայտը ներկայացրել է 13.08.2019թ., իսկ ՀԲԵՆ19/123-01 բանկային երաշխիքի վավերականության ժամկետը սահմանվել է 10.12.2019թ. ներառյալ, հետևաբար Կոնսորցիումի բանկային երաշխիքը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ համաձայն հրավերի՝ հայտի ապահովման վավերականության ժամկետը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպիսով՝ գտնում եմ, որ մերժելով Ընկերության հայտը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և առաջնորդվել է Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված այն պնդմանը, որ ընդհանուր հանգստյան օրը միայն կիրակին է, ապա հայտնում եմ, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր հանգստյան օրը կիրակին է, իսկ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ **շաբաթը և կիրակին**, բացառությամբ նույն հոդվածի 2-4-րդ մասերով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերի: Տվյալ դեպքում խոսքը գնում է բանկային երաշխիքի 90 աշխատանքային օր վավերականության ժամկետի պահանջի մասին, իսկ Հայաստանի Հանրապետությունում համընդհանուր ընդունված է հնգօրյա աշխատանքային շաբաթը, հետևաբար հայտի ապահովման վավերականության ժամկետը հաշվարկելիս հիմք է ընդունվում շաբաթական հինգ **աշխատանքային օրը** (երկուշաբթի-ուրբաթ)՝ չներառելով «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված **ոչ աշխատանքային օրերը**:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է, քանի որ Կոնսորցիումի հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Հարությունյան Շին» ՍՊԸ-ի կողմից 23.08.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**